

ՊԱՐԳԵԻԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Մ Ո Ւ Ր Ա Տ Ե Ա Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ի Ն

Անցեալ յուլիսի քսանհինգերորդ օրը կատարուեցաւ Մուրատեան վարժարանին տարեկան հարցաքննութեան պարգևաբաշխութիւնը նախագահութեամբ օսմանեան բարձրապատիւ դեսպանին 'ի Գաղղիա, Սաֆֆէդի փաշային, Աստուածապատիւ Գէորգ Հիւրմիւզեան Արքեպիսկոպոսին Սիւնեաց և ընդհանրական Աբբային Մխիթարեան միաբանութեան, և ներկայութեամբ բազմաթիւ համազգեաց և օտարաց. յորում վարժարանին մեծարգոյ Տեսուչն՝ յետ շնորհակալելու համառօտ բանիւք զհանդիսադիրա՝ Գաղղիերէն լեզուաւ, կը ներկայացունէր Դաս մը աւարտավարժ պատանեաց, որոնք իրենց կրթութեան և ուսմանց ընթացքը լմնցունելով կը պատրաստուէին դառնալ 'ի ծոց հայրենեաց, յիշեցունելով անոնց անմոռաց պահելու այն ամեն բարի բարի սկզբունքն որ ընդունելէին այս վարժարանիս մէջ, և այն ամեն պարտքն առ Աստուած, առ անձն և առ ընկերն, զոր սովորել էին իրենց կրթութեան ընթացիցը մէջ, և կը յորդորէր զանոնք ըլլալ բարի զաւակունք, ազնիւ քաղաքացիք և ճմարիտ ազգասէրք ու հայրենասէրք, և իրենց սրտին մէջ անշէջ պահել երախտագիտութեան կայծն առ վեհանձն բարերարն և առ ուսուցիչս. և կը կնքէր իր խօսքը մաղթելով բարի ճանապարհ և ամենայն յաջողութիւն 'ի նորոգ կեանս. և միանգամայն կը ներկայացունէր քանի մը աշակերտք ալ նոյն աւարտավարժ դասէն, որոնք յետ կատարելու գովութեամբ իրենց կրթութեան և ուսմանց ընթացքը, վարժարանիս երաշխաւորութեան տակ կը պատրաստուէին մտնելու մայրաքաղաքիս բարձրագոյն ուսմանց դպրոցները, զորոնք բացաւ, Մխիթարեան միաբանութեան աշակերտաց առջև՝ Գաղղիոյ կայսերութեան այժմեան բարձրապատիւ հազարապետն հասարակաց ուսմանց, Պ. Վիկտոր Տիւրիւի, վերամբառնալով մեր վարժարանին վկայականաւ զհայազգի աշակերտս հաւասարապատիւ աստիճանաւոր բանասիրութեանց և գիտութեանց (Bachelier ès lettres et ès sciences), առանց որոյ անմարթ էր մինչև հիմա հաւասար Գաղղիացւոց մտնել այն բարձրագոյն դպրոցները: Այս համառօտ ճառիս պատասխանեց բարձրապատիւ դեսպանը առաջիկայ բանախօսութեամբ գաղղիերէն լեզուաւ:

Ազնիւ Աշակերտք,

Ճշմարիտ հաճութիւն մը կը զգամ այս հանդիսիս մէջ գտնուելու, ուր արժանապատիւ և մեծարգոյ Աբբահօր ներկայութիւնը, զոր իմ քովս կը տես.

նէք, նոր պայծառութիւն մը կ'աւելցունէ, և կարենալու հաւաստել ձեր յառաջագիմութիւնքն, որ անշուշտ ըրած էք վարժարանիս արդիւնաւոր և իմաստուն մեծաւորին և վարժապետաց ճարտար և հանճարեղ վարչութեանը տակ:

Սրտանց մասնակից կ'ըլլամ այն բարեմաղթութիւններուն զոր լսեցիք և որ ձեզի եղան մեր սիրելի հայրենիքը դառնալու համար, և այն հաւատարիմ և արդար ծառայութեանց յաջողութեանը՝ որոնց համար կանչուած էք: Գաղղիա, այս առատասիրտ երկիրը, այս վառարանն համաշխարհական յառաջագիմութեան, որ չփախչիր ամեն զոհ ընելէ, բոլոր աշխարհք քաղաքականութեան լոյսը և բարերարութիւնները տարածելու համար, Գաղղիան զձեզ գրկաբաց ընդունեցաւ, և հարկաւոր ուսմամբք ճոխացուց: Հիմա տեսնեմ զձեզ, Ազնիւ աշակերտք, որ առած ուսմունքնիդ շահեցունէք, և գործածէք զայն ձեր հայրենակցացը օգտին և ձեր հայրենեացը փառացն համար:

Կրթութիւնը, ինչպէս որ իմաստութեամբ և պերճախօսութեամբ բացատրեց ձեր մեծաւոր վարդապետը, անտնօրինելի հարկաւոր է ազգաց: Կրթութիւնը մեր մտածութիւնները կը յստակէ, սրտերնիս ու մտքերնիս կը բարձրացունէ, և ազնուագոյն զգացումներ կը ներշնչէ մեզի: Կիրթ մարդուն մտաւորական ձիրքը բարոյական ձրից հետ միաւորելով՝ այս կատարեալ ներդաշնակութենէն կը ծագէ գիտութեանց, քաղաքական առաքինութեանց և առ Աստուած հաւատոց շնաշխարհիկ կայծը: Կիրթ մարդը տգիտէն լաւ կ'ըմբռնէ Աստուծոյ մեծութիւնը. վասն զի աչացն առջև պարզուած սքանչելի կարգաւորութեանց ամեն մասերն ալ կը քննէ, թէ և մարդկեղէն իմացականութիւնը չկարենայ կտրել անցնիլ այն սահմանը, զոր գերագոյն և անփոփոխելի կամքը դրեր է: Իսկ այն մարդը՝ որուն մտաւորական կարողութիւնները զարգացած չեն, ամենայն ինչ անկերպարան իրաց խառնաշփոթ կոյտ մը կը տեսնէ, որ քիչ շատ մտադրութիւն իրենց կը ձգեն, բայց առանց կարող ըլլալու անոնց իսկական պատճառներն ըմբռնելու: Ասկէ առաջ կու գան կռապաշտութեան այլ և այլ կրօնները, ինչպէս են անասնոց և անշունչ իրաց պաշտամունքը, որոնք շատ դարեր զմարդկութիւնը թշուառացուցին, և որոնց քանի մը հետքը դժբախտաբար տակաւին կը տեսնուին մինչև հիմա ալ հեռաւոր աշխարհաց մէջ, 'ի դերև հանելով այն անձանց փոյթն ու յարատե ջանքը, որոնք ինքզինքնին կը նուիրեն յառաջագիմութիւնը տարածելու համար: Նմանապէս այս բանէս առաջ կու գան այն սրտատուտոր անկարգութիւնները, մարդազոհները որ դեռ ևս կը կատարուին, որոնք մարդուս մտացն ու մեծութեանը և աստուածային ու մարդկային օրինաց դէմ՝ զարհուրելի ոճիրներ են: Ուրեմն քանի որ կրթութիւնը կը պակսի, ժողովուրդք բարբարոսութեան և տգիտութեան դժնդակ հետեանքները կը կրեն:

Փառք տանք Աստուծոյ որ այսպիսի լուսաւորեալ դարու մը մէջ կ'ապրինք, որ կրթութեան պակասութեանը աղետալի փորձառութիւնները ջնջեց ու անհետ ըրաւ. և Դուք, սիրելի աշակերտք, որ կը փափաքիք ձեր աշխատանացն արդար վարձքն առնուլ, գիտցէք ձեր ձեռք բերած ծանօթութիւնները աղէկի գործածել ձեր հայրենեաց օգտին համար, որով և մեր օգոստոսփառ կայսեր իղձը կատարած կ'ըլլաք, որ իր բարեբաղդ գահակալելէն՝ 'ի վեր չդադարիր նուիրելու

իր մտադրութիւնը , և վսեմախոհ հոգաբարձութիւնը առանց խտրութեան իր ամեն հպատակացը յաջողութեանը , երջանկութեանը ու կրթութեանն համար : Եւ այսպէս իր կառավարութեանը բարեսիրութեանն արժանի կ'ըլլաք , որ այնչափ ճշգրտութեամբ անոր վսեմ մտածութիւններն 'ի գործ կը դնէ :

Խօսքս լմնցունելէն առաջ ինձի հաճոյական պարտք մը կը սեպեմ օգոստոսի առ Սուրբանին պետութեանը կողմանէ շնորհակալ ըլլալ ձեր մեծաւորաց և վարժապետաց յարատեւ ու լուսաւոր ջանիցը , որոնցմով զձեզ հոգացին ձեր ուսման ընթացիցը մէջ : Ուրեմն անոնք որ Գաղղիայէն իրենց հայրենիքը պիտի դառնան , բարեպաշտութեամբ այս ազնիւ անձանց յիշատակը պահեն մտքերնուն մէջ , և լաւ գիտնան որ քաղցր վարձատրութիւն մը եթէ կայ այն անձին՝ որ պատանեկան թարմ միտք մը կրթեց գիտութեանց մէջ , պատուոյ և առաքինութեանց ճամբուն մէջ , այն ապահովութիւնն է միայն որ գիտէ թէ իր աշակերտը միշտ իրեն երախտապարտ պիտի մնայ :

Չմոռնանք նաև վարժարանիս Բարերարը ու անունն օրհնելու , որ այնչափ ազնուական կերպով գործածեց իր ճոխութիւնը նմանեացն օգնութեան հասնելու համար : Երանի թէ ուրիշներն ալ իրեն օրինակին հետեւին : Եթէ ամեն մեծատուն մարդիկ իրենց ճոխութեանը մէկ պզտի մասը իր երկուց սեռից աղքատաց զաւակաց կրթութեանը նուիրէին , հիմա երջանիկ կ'ըլլայինք ամեն երկիրներու մէջ տեսնելով հասարակաց կրթութեան անթիւ դպրոցներ ու վարժարաններ :

վարժարանիս աւարտավարժ աշակերտքն են .

Պ . Վիշէն Խորասանձեան .

Պ . Միքայէլ Հէգիմեան .

Պ . Գէորգ Վարայեան .

Պ . Ոթոն Վալճեան .

Պ . Փառնակ Թովմասեան .

Պ . Յովհաննէս Նիկողիմոսեան .

Պ . Վիշէն Մուրատեան .

Պ . Տիգրան Սոփեալեան .

Հ Ո Ղ Մ Ն

Ուստի 'նդ օդոց նըսեմաստուեր ասպարէզ
Մըռնչելով արշաւասոյր հասանես ,
Հողմն՝ ընդ ոլորոս երկրի տըւեալ ասպատակ ,
Քանդել զհանուրս ըսպառնալով հիմնատակ ...
Մութ են այերք , ամպք ձրձոտեալ ցիր եւ ցան
Աստեղք տժգոյն , կոհակք ըմբոստք ի տատան .
Ուստի , ընդէր : — Ի կապանաց միտք իմ՝ զերծ
Քեւ արշաւեն ի թըլփայորդ ծոց այերց .